ՀԱՅ ԵՐԳԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՈՒՂԻՆ ԵՎ ՀԱՅ ԵՐԳՉԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

(Եզիշե Չարենց. «Որպես գորշ, դեղին տերևներ...»)

Ստեղծագործական ողջ կյանքում տարբեր առիթներով Չարենցն անընդհատ անդրադարձել է հայ երգի պատմական ճակատագրի քննությանը։ Դա եղել է անցյալն ու ներկան պատմական զարգացման մի ուղեգծի վրա տեսնելու հետևողական կողմնորոշում. որն արտահայտվել է ոչ միայն գրականության պատմությանն ու ընթացքին վերաբերող հոդվածներում ու ելույթներում, այլև՝ գեղարվեստական երկերում, ձևավորելով հստակորեն արտահայտված մտորումների մի շղթա։ Պատմության մի ծայրին Մովսես Խորենացին է, մյուսին՝ ինքը։ Նրանց միջև ամբողջ հայ դարությունն է, հայ հանճարի ճակատագիրը՝ ենթարկված ժողովրդի պատմական ճակատագրին։ Դա հայոց Այր-ի ու Բեն-ի անցած ամբողջ ճանապարհն է՝ որպես ազգային Իանի ճանապարհ, որպես ազգային Ոգու պատմություն։

Մտորումների այդ շղթան ձևավորվել է «Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում» տողից սկսած՝ ծավալման հնարավորություններ ունենալով «Պոեզոդուռնա» գրքում, «Ռոմանս անսեր» և «Էլեգիա՝ գրված Վենետիկում» պոեմներում։ Այս տեսակետից հատկապես առանձնանում են «Էպիքական լուսաբաց» և «Գիրք ճանապարհի» ժողովածուները՝ «Ներքողներ ու խոհեր», «Տաղեր և խորհուրդներ», «Արվեստ քերթության», «Գիրք իմացության» շարքերով, ինչպես նաև «Գովք խաղողի, գինու և գեղեցիկ դարության» «Նորք», «Դեպի լաառը Մասիս», «Մահվան տեսիլ» պոեմներով։ Առանձնանում են նաև 1935—1937 թթ. ստեղծագործությունները՝ «Կոմիտասի հիշատակին», «Երբ բարձրանում է նա վեր», «Իմ լեռան աղոթքը» պոեմները, բազմաթիվ բանաստեղծություններ։

Գրականության և արվեստի թանգարանի Չարենցի ֆոնդում (ԳԱԹ ՉՖ) պահվում են ոչ քիչ թվով և առայժմ ամբողջապես կամ մասամբ անտիպ երկեր, որոնք այս տեսակետից լուրջ հետաքրքրություն են ներկայացնում։ Դրանցից կարևորագույնը «Որպես գորշ. դեղին տերևներ...» տողով սկսվող պոեմն է, որ պահվում է 54 համարանիշով։

Այս երկի սկզբի 293 տողը «№ 5-ի հիշատակին» վերնագրով, իր մոտ եղած ձեռագրի հիման վրա, հրապարակել է Ռ. Ղազարյանը (տե՛ս «Գրական թերթ», 13. I. 1967)։ ԳԱԹ ՉՖ պահվող ձեռագիրը (Ռ. Ղազարյանի ձեռքին եղածը. որն այնուհետև նա նվիրել է թանգարանին) հնարավորություն է տալիս, նախ, ճշգրտելու տպագրվածը և ապա՝ ասպարեզ հանելու պոեմի թե՛ շարունակությունը, թե՛ բնագրային տարբերակներն ու սևագրությունները։ Հրապարակված հատվածի լափով պոեմի ձեռագիրը հիմնականում հստակ է և ընթեռնելի։ Շարունակության մեջ ինքնագիրը տեղ-տեղ դժվար ընթեռնելի է, տեղ-տեղ անընթեռնելի. քիչ չեն նաև քայքայված էջերը։ Թանգով գրած ձեռագրի գծերը շատ տեղերում կորցրել են որոշակիությունը, բառերը լուծվել, ներծծվել են թղթի մեջ։

Պոեմը Չարենցի ձեռքով համարակալված է մինչև 28-րդ էջը։ Քանի որ 20-րդ էջի համարակալումը կրկնվել է, ուստի՝ ամբողջությամբ համարակալված է 29 էջ, որից հետո էջահամար այլևս չկա։ Այդ համարակալված էջերի ընդգրկումով 456 տող ընդունել ենք որպես պոեմի հիմնական տարբերակ, իսկ մնացած էջերը (464 տող) զետեղել ենք «Տարբերակներ, բնագրային տարբերություններ, սևագրություններ» բաժնում, որ տրված է վերջում։ Պոեմի ամբողջացման նպատակով չհամարակալված էջերից կցել ենք վերջին երեք ութնյակները՝ 456—482 տողեր։ Այսպիսով՝ պոեմի բնագիրը կազմում է 482 տող։

Այժմ վերնագրի մասին. Ռ. Ղազարյանը զրույցի ժամանակ պնդում էր, որ ինքնագիրն ունեցել է թերթիկ, որի վրա գրված է եղել վերնագիրը։ Դա մեզ միանգամայն հավանական է թվում, որովհետև Չարենցը սովորություն է ունեցել նոր սկսվող երկի մուտքի էջը գեղազարդել՝ վերնագրին կից նշել գրության վայրը. ժամանակը և այլ անհրաժեշտ տվյալներ։ Սակայն ԳԱԹ ՉՖ պահվող ձեռագիրը, որը եղել է մեր ձեռքի տակ, սկսվում է պոեմի առաջին տնից և բանաստեղծի թվագրումով առաջին էջն է։ Նպատակահարմար համարեցինք պոեմը վերնագրել առաջին տողով՝ «Որպես գորշ, դեղին տերևներ...», քանի որ շապիկի դեր կատարող էջը, որի վրա պետք է գրված լիներ «№ 5-ի հիշատակին» վերնագիրը, մենք այդպես էլ չգտանք։

Պոեմը հիմնականում գրված է ութնյակներով, կան նաև շեղումներ։ Վերջնական մշակման ենթարկելիս՝ Չարենցը դրանք ամենայն հավանականությամբ կկարգավորեր։

Ինքնագրի երրորդ էջի կողքին, 48-րդ տողից հետո Չարենցը պոեմը թվագրել է.

«Ծաղկաձոր. 29—30—31—VIII. 1936

Երևան. 17.11—1937»

Ի՞նչ է ասում Չարենցն այս պոեմով։ Ասում է, որ մեր ժողովրդի պես աշխարհով մեկ ցրիվ եկավ նաև մեր երգի հունտը, կորավ գնաց օտար աշխարհներում և անվերադարձ կորստի մատնեց մեր ժողովրդի հոգևոր հանճարը։ Հայ հանճարի սաղմը մեր գոյության ներկայությունն է աշխարհում, ուստի և. պարտության մատնելով ժողովրդին, բոլոր ժամանակների բռնակալները աշխատել են նաև ջլատել մեր հոգևոր միասնությունը։ Նրանք այրել են մագաղաթներ, ավերել տաճարներ, ժողովրդից խլել նրա լեզուն, հայորդիներին ծառայեցրել իրենց պետությանը, նրանց արվեստով ու գիտությամբ զարդարել իրենց։ Այսինքն՝ Հայաստան աշխարհի պարտություններին և բաժանումներին հաջորդել է հանճարեղ այրերի «թալանը» և ժողովրդի հոգևոր միասնության ջլատումը։ Հողմը քշում է Հայոց երկրի հոգևոր սերմը, որ նրանք չընկնեն ու չամրանան «Հայրենի հոգերի վրա,— Այլ. իբրև դեղին տերևներ, Թշնամի դաշտերում մեռնեն։ Այս դեպքում Չարենցը ցույց է տալիս այն ողբերգությունը, երբ հայոց երգի սերմը քշում ու ոչնչացնում է ոչ միայն բռնակալը՝ օտար դաշտերի «Թամին», այլև՝ այդ բռնակալի տեղական կատարածուն՝ «հայրենի Հողմը»։ Եվ դա այն պահին, երբ թվում է, թե հայ երգի թափառիկ ոգին աշխարհի հեռավոր ծագերից, բազմաթիվ գաղթօջախներից վերադարձել և հանգրվանել է իր հողի վրա, երբ վերջապես հայ խոսքը վերագտել է իր հայ հայրենիքը։ Բայց և «Հայրենի սիրով հանցապարտ,— Հարազատ, սիրած հանդերի Ծռանդուն խանդո՛վ հանցավոր» նրանք աշնան տերևների նման «Ընկնում են, ընկնո՛ւմ... Եվ քշո՛ւմ է, քշում մեր մոլի Հայրենի դաշտերի քամին»։ Բոլոր հայ հանճարների մեղքը հայրենիքի սերն է, որովհետև այն, ինչ որ ունի բույր նախրյան՝ անմահ է պահում հայրենիքի գաղափարը, ուստի և՝ նրանք մատնվել են «Մահաշունչ, դժնի հողմերին»։ Չարենցն ասում է, որ մեր հանճարի ոգին իր վերադարձով ու մահով թեև իմաստավորում է հայրենի հողն ու շուրը, բայց և ողբերգության մեջ ծիլ տվող այս խոհը ի սկզբանե «սևախոց» է, որովհետև այդ ոգին վերադարձել է. որ ապրի ու ապրեցնի և ոչ թե մեռնի, իսկ մեռնելիս՝ անդամ գերեզման չունենա. «Եվ չունե՞ք անգամ փոս դուք հիմա՝ Եվ օտա՞ր եք հայրենի հողում...»։

Չարենցն ըստ ամենայնի կանխազգում է իր և իր ընկերների մոտալուտ ողբերգական վախճանը։ Եվ դա պատահական չէ, որովհետև հայ հանճարի դատապարտվածության մասին Չարենցը խոսում է՝ աչքի առաջ ունենալով հայ հոգևոր ուժերի հերթական սպանդը։ Հոկտեմբերյան հեղափոխության բոսորագույն կարմիրը Ստալինը վերածեց «արյունալիճ արյան» և արյունից շառագունած ճառագայթն էր, որ քանդեց, «Ցեցի նման մտավ ներս, Որ ուտի դարավոր մի միջուկ»։ Սա այս շրջանում Չարենցին համակած մտքերի ծավալումն է, ըստ որոնց Ստալինը «Լափում է որձակը մտքի, Զրկում մեզ հունտից ազգային»։ Եվ ապա՝ «Հելիկոնը։ մեր երգի, ողջը տարան թիարանա և կամ՝ «Ինչել է այսօր Հելիկոնն ամբողջ Նախրյան երգի— ողջը թիարանա։

Աշխարհում երբևէ չեղած այս անլուր աղետի պահին Չարենցը բազմիցս դիմում է իր դրշակից ընկերներին, անգամ՝ դրական հակառակորդներին և նրանց կոչում ոգու ամրության։ Դրա հետ մեկտեղ նա հայացքն ուղղում է առանձին անհատների ճակատագրին և հայ երգի պատմական մաքառումների ուղին ու ներկա վիճակը պատկերում նրանց կերպավորող գործերում։ Ամեն մեկի մեջ առանձին Չարենցը տեսնում է նաև իրեն և իրենով վերաճշտում երկրի ու երգի ճակատագիրը։ Որպես նոր երկրի սերմնացան՝ բանաստեղծը շատ ցավագին էր ասում ամեն մի արգելք, որ Ստալինը և նրա տեղապահներն ու կամակատարները իջեցնում էին ազգային երգի ճանապարհին։ Ուստի և՝ միջնադարից վերադարձած այդ հավատաքննությունն ու ինկվիզիցիան

Այրում է երկաթով ու հրով,
Որպես ծիլ թշնամի արյան—
Ինչ երանգ ունի նախրյան
Եվ կարող է վարակել սիրով...

Ըստ Չարենցի՝ ազգային ոգու դեմ ուղղված այս դավերը, որոնք մի դեպքում արտահայտվել են ազգային դպրոցները փակելով, մեկ այլ դեպքում՝ աքսորով ու գանահարությամբ, փորձվել

.ու սնուցվել են անցյալում, ցարերի ժամանակ և հիմա գործածության մեջ են մտնում անվրեպ կրակոցներով։ Համընդհանուր ցավի մեջ ուժգնանում են նաև անձնական կյանքի տագնապները. «Եվ ես էլ... Արդեն քար կացնով խոցված՝ Մնում եմ <արդեն> իմ հերթին»։

Այս պայմաններում հայրենի դաշտերի Հողմն ու Քամին «Գողերին է միայն բարեկամ», հանցագործին ու մարդասպանին։ Այլյունով նվաճած իրական հայրենիքի փոխարեն այդ Հողմն ու Քամին հոլակում են մի նոր հայրենիք, որը ոչնչացնում է իրեն ստեղծող որդիներին և հովանավորում գողին, մարդասպանին, կամակատարին և բոլոր նրանց, ովքեր հանուն մի կտոր հացի շատ արագ մոռանում են իրենց ինքնությունը, պարտության մատնում սերնդից սերունդ ժառանգած ոգեղեն ուժը։

Պոեմը գրված է նույն նյութի ու նույն տրամադրության անընդհատ վերարծարծումներով՝ խորհրդանշաններ ունենալով Հողմը, Քամին, Հունտը, Սերմը, Աշնան տերևը, Հայրենի հերկը, որոնցից Հողմը և Քամին երբեմն գրել է մեծատառ, երբեմն՝ փոքրատառ։ Խորհրդանշանի է վերածվում նաև Երդը, լծակից ունենալով Երգասանի կերպարը։ Միահուն թվացող մտորումների շղթան իր մեջ նեարառում է բազմանիստ կողմեր՝ ժողովուրդ և ժողովրդի պատմական ճակատագիր, հայ ոգի և հայ ոգու խաչելություն, ժամանակ և անհատ, Չարենցով կերպավորվող որոշակի բանաստեղծի ճակատագիր և այդ ճակատագրի դեմ գործող պետական անխափան մեքենա։

Բնույթով պոեմը խորհրդածական է, որ ընթացք է տալիս մոայլ ու ողբերգական տրամադրությունների։ Բայց համատարած ա.դ մահվան մեջ գալիս է մի պահ, երբ, աչքի առաջ ունենալով հայ հանճարի լույսը, հայ հանճարի թեև տրորված, բայց և տոկուն ուժը, Չարենցը նուրբ անցումով խոսքի մոայլ ողբերգը վերածում է գովքի և փառաբանում նախիրյան հանճարի ինքնությունը.

Անձրևի, ցրտերի, շոգի,
Տանջանքի, սովի, հարվածի,
Մենության, դառնության, լաղի
Բոցերում կարծրացած, օ, ոգի՜...
Օ, ոգի, օ, սաղմ նախիրյան
Հանճարի,— ո, ինքնություն,
Աշխարհում չկար ո՞չ մի թույլ,
Որ լուծեր հյուլեն քո արյան...

Օ, պի՜րկ, անհարի՜ր, անլույս.—
Միաղման չենթակա տարր,—
Տարամերժ, օ, տարր դու օտար,
Որ հորդել ես դարեր անդադար
Ինքնաբուխ, սեփական լույս...

Եվ ապա՝

Ես գովք եմ երգում քո անմահ
Ինքնությանն այդ բարձրաբերձ
Որ, իբրև անխորտակ մի բերդ,
Դարձրեց մեզ — հավիտյան — մա՜րդ։—
Ես գովք եմ երգում մեր ոգուն,
Որ անկոր ինքնությամբ կենդանի՝
Փորձությամբ կարծրացավ քանի—
Այնքան պիրկ դարձավ ու տոկուն։

Թեև ոչ անմիջականորեն և ոչ էլ զրական բացահայտ ազդակներով, այնուամենայնիվ Չարենցը շարունակում է Ատոմ Յարճանյանի և Դանիել Վարուժանի հայրենի հրավերի մոտիվը, որի արտահայտություններն են հենց «Հայրենի հրավերն» ու «Հացին երգը»։ Խոսքն ուղղելով մահվան մատնված աշնան տերևներին, այսինքն՝ իր երգակից ընկերներին, Չարենցը ասում է. «Նրանց մահն — անմահ հորովել է՝ Հայրենի հողի հրավեր...»։ Այս մահը՝ մահերգի ու սգերգի տրամադրություններով դառնում է ընդհանուր ողբերգի մի ծանր շառաչ և իրոնիկ շեշտով տրվում գովերգի։ Ստալինյան ամբողջ մղձավանջը հառնում է իր տոնական ծափ ու ծնծղայով.

Ցնծություն է մահն աշխարհում,
Հաղթական երթ է շքեղ,
Գալիքի ցնծալի շքերթ—
Հոնդուն ցրտերի միջով...
Փա՜ռք, օ, փա՜ռք, քրքիջով ու ճիչով
Դեպի մահը թռչող ընդառաջ
Սաղմերին.».

Այսպես նյութի և տրամադրության անընդմեջ վերարծարծումներով, պատկերների կրկնադարձով, տողերի, առանձին արտահայտությունների ու բառերի կրկնարերումով Չարենցն ըստեղծում է ժամանակի երգը, դրա մեջ մեկտեղելով հայ երգի ու հայ երգասանի ճակատագիրը։

Պոեմը տպագրության ենք ներկայացնում պահպանված մասերի ամբողջությամբ։ 51 թերթ ներկայացնող ինքնագիրը, որը որոշ դեպքերում գրված է երկու երեսի վրա, ըստ էության անավարտ է և անմշակ։ Կարծեք թե վերջնական տեսքի բերված տների կողքին քիչ չեն՝ նաև այնպիսիները, որոնք սոսկ առաջին գրի արդյունք են։

Չնայած ձեռագիրը ուսումնասիրել ենք հանդամանորեն, այդքանից հետո էլ ամենևին բացառված չենք համարում վրիպումները, որովհետև ձեռագիրը ոչ միայն անմխիթար վիճակում է, այլև խառն են Չարենցի կողմից չհամարակալած էջերը։

Սուրանկյուն փակագծերի մեջ նշված են՝ 1. անընթեռնելի բառերը <անընթ.>, 2. քայքայված բառերը <քայք.>, 3. ենթադրաբար վերականգնված բառերը, 4. այն բառերը, որոնք Չարենցը սկզբնապես դրել է, ապա ջնջել, բայց տեղը նոր բառ չի դրել։

Դ. Վ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՆՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

ՈՐՊԵՍ ԳՈՐՇ, ԴԵՂԻՆ ՏԵՐԵՎՆԵՐ...

Որպես գորշ, դեղին տերևներ,—
Ցրում է Հողմը, ցրում—
Անդադար, սերնդե սերունդ—
Նաիրյան երգի արևկեր,
5 Աներկիր հունտը անմահ,
Որ վաղո՜ւց, իր հողից հեռու՝
Ե՛վ դարեր առաջ, և՛ հիմա—
Քշվել է տաշեղի նման
Աշխարհի բոլո՜ր բացերում...

10 Եվ կրկին, որպես տերևներ,
Քշո՜ւմ է հողմը նրանց,
Որ չընկնե՜ն, նրանք շամրանան
Հայրենի հողերի վրա,—
Այլ, իբրև դեղին տերևներ—
15 Թշնամի դաշտերում մեռնեն...

Եվ ահա, ինչպես միշտ,— հիմա
Աշխարհի բոլոր կողմերից,
Ազատված հազար հողմերի
Ժանտաժանտ ուժից, մերձիմահ
20 Հավաքվել էին երբ հազիվ
Դաշտերում իրենց հարազատ—
Հայրենի հողմն է ահա ժանտ
Հալածում նրանց՝ բիրտ ու զազիր...

Թափվում են, թափվում անդադար՝
25 Հայրենի հողմերի ներքո—
Խեղճացած, նողկալի երգով՝
Հայրենի սիրո՛վ հանցապարտ,—
Հարազատ, սիրած հանդերի
Եռանդուն խաղո՛վ հանցավոր—
30 Ընկնում են, ընկնո՛ւմ հանցագործ,
Ինչպես տերևներն այս դեղին...

Ո՛չ, պոետ,— օ, ո՛չ,— օ, ո՛չ,—
Ցնծագին երգով, շառաչով
Տերևներն այս՝ մահվան առաջող—
35 Նրանցից երջանիկ են ու ողջ,—
Նրանցից բյուրապատի՛կ առավել
Անվեհեր են այս չոր տերևները,—
Նրանց մահն — անմահ հորովել է՝
Հայրենի հողի հրավեր...

40 Թռչո՛ւմ են նրանք զվարթուն
Խառնելու շրշյունն իրենց չոր—
Հայրենի ծարավով տոչոր
Հողերին, շողին ու մարդուն,—
Ընկնում եք ընդմի՛շտ սակայն դուք՝
45 Մեռնելու մահո՛վ անիմաստ,—
Եվ — տխո՛ւր է ձեր երգը նվաստ,—
Եվ չունե՞ք անգամ փոս դուք հիմա՝
Եվ օտա՞ր եք հայրենի հանդում...

Եվ քշո՛ւմ է, քշում մեր մոլի
50 Հայրենի դաշտերի քամին
Դեռ ոխով ահեղ, թշնամի,
Ինչպես տենդն՝ արյունից ջերմողի,—
Դեռ քշում է հունտերը բոլոր
Նաիրյան սիրո ու երգի,
55 Որ չընկնեն հայրենի հերկին՝
Սահմանված բերքի՛ համար նո՛ր...

Աննահանջ կամքով զրահավոր,
Աննկուն, անխոնջ ու դաժան՝
Համակված ոխո՛վ սրբազան
60 Եվ անսահման ահով.—
Համակված անհուն սարսափով
Հայրենի սիրո ու երգի,—
Մաքրո՛ւմ է հող ու երկիր
Ցեցերի՛ց այդ՝ մահից խուսափող...

65 Համակված անանց սարսափով,
Ինչպես արնագույն լաթից
Ցուլերն են դժնում, մահատիպ,—
Մահացու սարսափի տապով—
Այրում է երկաթով ու հրով,
70 Որպես ծիլ թշնամի արյան—
Ինչ երանգ ունի նաիրյան
Եվ կարող է վարակել սիրով...

Ինչպես սև, զազիր զառանցանք,—
Որ պատում է հոգին մարդկային,—
75 Այդպես՝ ամե՛ն մի դահիճ
Ո՛չ թե ա՛յն է համարում հանցանք,—
Որ հանուն նողկալի փողի
Գլո՛ւխ է կտրում ինքը կացնով,—
Այլ — քաղցից դարձած խելացնոր—
80 Իր կտրած գլուխը դողի...—

Ճի՛շտ այդպես հիմա մեր Քամին,
Մեր երկրի Հողմը տիրող—
Հայրենի ջուրն ու հողը սիրող
Գողերի՛ն է միայն թշնամի...
85 Բռընկված աշխարհի սիրով՝
Աշխարհի փրկարար Քամին—
Կարո՞ղ է արդյոք իր սիրո
Տիեզե՛րքը գրկող հույզերով
Ընդունել — հին տունն իր սիրող
90 Մի զազիր հաշմանդամի...

Հա՛կված ահռելի ոխով
Դեպի սև, անասնական
Այդ սիրով վարակված, սակայն
Թաքնված «կուսության» քողով
95 Ոսոխները բոլոր նողկալի,—
Հնձում է եռանդով անծիր
Հայրենիքն իր — հայրենի նա հնձից,
Որ ցանի — հայրենիք մի գալիք...

Իր երկրի հանցավոր սիրով
100 Վարակված շյուղերն այդ սակայն
Հրկիզում է նա — հանուն իսկակա՛ն
Հայրենիքի սիրո...
Նշելով գարշանքի կնիք
Հնացյալ սիրո ճակատին—
105 Հռչակում է նա դրան հակադիր—
. . . . . Հայրենիք...
. . . . . .

Եվ ընկնում են, ընկնում անդադար,
Ինչպես շուրջը — տերևներն աշնան,—
110 Հայրենի հանդերում բուսնած
Ցողուններն՝ հողմերին օտար...
Ընկնում են, ընկնում են անվերջ—
Եվ ծիլեր՝ դեռ նուրբ, նորընծա,
Եվ — արմատից հնձած—
115 Բարդիներ՝ արդեն աստղամերձ...

Օ, այն չէ՛ սակայն զազրելի,
Որ քշում է այսօր մի հողմ,
Թշնամու նման, ամեն կողմ—
Մեր երգի նոր ծիլերն էլ։—
120 Այն ե՞րբ է եղել — հարազատ
Իր երկրի, կամ օտար կողմերի
Մահաշունչ, դժնի հողմերից
Նաիրյան երգի սաղմը — ազատ...

Քշե՛լ է միշտ է՛լ նաիրյան
125 Երգերի սաղմը քամին,—
Տեսել է նա անթի՛վ թշնամի,
Բայց ծաղկել է կրկին՝ բո՛րբ ու բուրյան։
Քշվե՛լ է, արվել ոտնակոխ,
Խառնըվել հրի ու փոշու,—
130 Բայց իբրև ոգի, իբրև շունչ,
Իբրև սաղմ անմահ, ինքնագոհ,—

Պահպանել է նա մի՛շտ անմեռ։
Իր ներքին ինքնությամբ անկոր,—
Ինչպես հունտն է պտուղի — անկոխ,
135 Քանի՝ չի նեխել միջից դեռ...
Պահպանել է իր միջուկն — անեղծ,
Եվ դարձել դրանո՛վ միայն — հար
Բյուրավոր դժնի, անհնար
Փորձանքների համար — անմերձ...

140 Անձրևի, ցրտերի, շոգի,
Տանջանքի, սովի, հարվածի,
Մենության, դառնության, լացի
Բոցերում կարծրացած, օ, ոգի՛...
Օ, ոգի, օ, սաղմ նաիրյան
145 Հանճարի,— օ, ինքնություն,—
Աշխարհում չկար ո՛չ մի թույն,
Որ լուծեր հյուլեն քո արյան...

Օ, պի՛րկ, անհարի՛ր, անլույծ,—
Միացման չենթակա տարր,—
150 Տարերամերժ. օ, տարր դու օտար,
Որ հորդել ես դարեր անդադար
Ինքնաբուխ, սեփական լույս...
Դարերի ծագից, ակունքից
Մինչև օրս հասած դեռ ասա
155 Օ, դու, նաիրյան սաղմ,—
Մի՞թե արդ վերջապես հասար
Քո ան... <անընթ.> երկունքին...

Օ, հազար հողմերի նոխազ,
Օ, հազար հողմերով տար,
160 Դաշտերում հայրենի և օտար
<Բյուրաբյուր> ոտքերով կոխած...
Դու եղել ես սաղմ կենդանի,
Ոգու հունտ անկոխ ու անմահ,
Որ ծաղկում է բոցով անմար,
165 Հավիտյան՝ ինքն իր մեջ՝ անմահ,—
Եվ ծաղիկ է տալիս,—
Ուր <անընթ.> Հողմը տանի...

Ես գովք եմ երգում քո անմահ
Ինքնությանն այդ բարձրաբերձ,
170 Որ, իբրև անխորտակ մի բերդ,
Դարձրեց մեզ — հավիտյան — մա՛րդ։—
Ես գովք եմ երգում մեր ոգուն,
Որ անկոր ինքնությամբ կենդանի՝
Փորձությամբ կարծրացավ քանի—
175 Այնքան պիրկ դարձավ ու տոկուն։

Ես գովք եմ երգում Նաիրյան
Պանծալի ոգուն հայրենի,
Որ հրով կոփված հայրերից
Ժառանգել եմ ես՝ հրի հետ արյան։
180 Ես գովք եմ երգում <ցնծության>՝
Հանուն հոր, և՛ որդու, և՛ հոգու,—
Նաիրյան բարձրաբերձ ոգուն,
Նաիրյան սաղմին անկորուստ...

Բայց և գովք եմ երգում խնդավառ
185 Հողմերին, քամուն, հրդեհին,
Որ <ոտնակոխ> արին
Նաիրյան սաղմն անդադար։
Ես գովք եմ երգում վերջապես
Մահաշունչ, վայրագ, ամեհի
190 Ուժերին Փորձության ու Մահի,
Որ մեր ոգին չափեց։—

Որ դարե՜ր, դարե՜ր, դարե՜ր,
Վայրենի՜, վայրա՜գ, բարբարո՜ս,
Տեսնելով, իբրև բարձր փարոս,
195 Մեր ոգու <անընթ.> հանճարեղ,—
Խառնիխուռն, ինչպես հորդաներ,
Հեղեղներ ամեհի, կործանող—
Խուժեցին հողմերի պես <տանող>—
Եվ ... անհետ կորան աշխարհում...

200 Ես գովք եմ երգում կործանիչ
Ուժերին վայրագ, ամեհի,
Որ ներքուստ, սակայն, ամայի—
Դասատու են դառնում փորձանքի։
Եվ երգում եմ գովք վերջապես
205 Նաիրյան ոգուն ամեհի,
Որ <երկնումով> էր ողջունում մահին,
Որ պիտի իրեն կործաներ...

Եվ այն ո՞ր, այն ո՞ր կենդանի,
Սաղմնավոր, սաղմով անմահ
210 Խնդությամբ չեն դեպի մահ
Ընթանում, իբրև հանդեսի...
Այդպես չի՞ արդյոք մոլեգնած
Ծառերի ցնծությունն այս ահա,—
Ցնծությամբ են թռչում դեպի մահ
215 Տերևներն ահա շուրջս դեղնած...

Հնչելով ցնծության ծնծղաներ—
Ցրելով տերևներն իրենց շոր—
Ցնծությամբ ծփածոփ ու ճիչով—
Հղում են կենսատու ընծաներ...
220 Ցնծագին, ամեհի, շոա՜յլ
Ցրում են սաղմերն իրենց բյուր
Աշխարհի կողմերը բոլոր,—
Որ, եթե կարող են — աճեն...

Ցնծություն է մահն աշխարհում,
225 Հաղթական երթ է շքեղ,

Գալիքի ցնծալի շքերթ—
Հանդուն ցրտերի միջով...
Փա՜ռք, օ, փա՜ռք, քրքիջով ու ճիչով
Դեպի մահը թռչող ընդառաջ
230 Սաղմերին . . . . . :

Բայց դո՜ւք,— դո՜ւք,— շվարած,
Ձեր մահից առաջ մահացող,
Ինքնամերժ քծնության հացով
Մահատիպ կյանքին ձեր վարած,—
235 Հայրենի հողմի այս մոլի
Գերանդու եռանդուն թափով
Գետնահար փռված, անխոս
Օ, վերջին հերկերի ծիլեր...

Օ, դուք,— դեռ այսպես խնամքով
240 Արմատախիլ շարած,
Դեռ դրանից առաջ
Մեր երգի հնամյա, անկոխ
Հողերից բարձրացած, վերջին
Նաիրյան անաղա՜ռտ երգի բերք,—
245 Այդ ե՞րբ, այդ ե՞րբ, այդ ե՞րբ
Պղտորեց ակունքը ձեր ջինջ...

Որքան էլ ուշացած բերք
Հաղարամյա հունտի,
Որ տվել էր դեռ երեկ անթիվ
250 Բարձրաբերձ վերձիգ երգի
Ուր, իբրև սերունդ երեկվա,
Մի գարունք ընդամենն առաջ—
Բարձրացել էին ի՜նչ կենսառատ
Երգիչներ՝ ոգով աներկրա...

255 Հնամյա անտառում բուսած,
Արմատներ ձգած դարավոր
Մի կաղնու սաղմը մի օր,
Որքան էլ հեռու,— ասա՜,—
Ասա՜ ինձ, անտառ հայրենի,
260 Կարո՞ղ է ծնած չլինել
Այդ սաղմը — և ոչ մի հյուլե
Հայրենի անմահ ավյունից:

Կարո՞ղ է լինել մի սերունդ,
Որ նախորդ սերնդից հանկարծ
265 Ձունենա ոչի՜նչ ժառանգած,
Իբրև ջիղ, արյուն ու ավյուն:—
Որքան էլ ուշացած
Տարածվել այնպես գետնաքարշ,
Որ ոչ մի ցողուն չցանկա
270 Գեթ մեջքը շտկել մի անգամ...

Տարածվում եք, ընկնում եք այդպես,
Թափվում եք — այդպես ինչին—
Հայրենի հողմերի ընչից
Դուք ահա իմ շուրջը անվերջ...

275 Տարածվում եք, փռվում եք հլու,
Հանցապարտ ժպիտով, խեղճ,
Որ ներքուստ կա դրված ձեր մեջ։

Եվ ա՛յդ է ահա,— ահա այդ
Խեղճությունն է եղել ձեր ներքին,
280 Որ թախիծ է ձուլում երգիս—
Եվ լցնում ոգիս տրտմությամբ։—
Եվ զարմանք է պատում, և անդուռ
Տարակույս ու կասկած անգամ,—
Թե ինչը ձեզ թեքեց այնքա՛ն,
285 Որ դարձաք անկամ այդքան դուք...

Օ, այդ ի՞նչ, այդ ի՞նչ զորավոր
Բացիլ էր՝ ոգու ցեց խոցե,
Որ այդքան հե՞շտ սղոցեց
Նաիրյան <ոգին> զրահավոր,
290 Ձեր ոգու անկոխ ու անեղծ
Ինքնությունն հազարամյա,
Որպես մաշկ մարմնի զառամյալ,—
Եվ, որդի նման, մտավ ներս...

Որպես ճառագայթ անտես՝
295 Նրա պես ամենո՛ւր թափանցող—
Այս կարմիր Հողմերի ցնցող
Ճառագայթն էր այդ, որ քանդեց
Նա ցեցի նման մտավ ներս;
Որ ուտի դարավոր մի միջուկ,—
300 Բայց... գտավ այնտեղ միայն ջուր,
Որ վաղուց նեխած էր արդեն...

Հողմերի անհողդողդ <քայք.>,
Որ ձեզ զգետնեց թափով,—
Օ, ինքն էլ տեսավ <քայք.>,
305 Որ ...միջուկ չունի ձեր հոգու
Եվ տեսավ, որ վաղուց արդեն ձեր,
Ձեր անկոր թվացող ոգու
Նաիրյան հին միջուկում
<Սոսկ> ջուր է նեխած մնացել։

310 Այդպես մարդ թարմ, անեղծ <.....>
Արտաքուստ կարմիր խնձորում
Կտրելուց հետո որդ <է> գտնում
Մինչև հունտը նրա թափանցած։
Ախ, տեսեք, և դա բնական <է>,
315 Եվ որդերն անգամ այդ գիտեն,
Որ պիտի հունտը ուտեն
Եվ ուզում են սպանել մի կյանք։

Բայց այդ ե՞րբ, այդ ե՞րբ, այդ ե՞րբ
Թափանցեց մահվան որդը ձեր մեջ,—
320 Եվ երբ հե՞շտ այսքան գետնահարվեց,
Մենք տեսանք, որ վաղուց է նա եղկ.
Քողարկված առողջ թվացող
Նաիրյան կարմրավուն կեղևով—

Թե ներքուստ, ավա՜ղ, թե ձևով—
325 Դուք ընկած եք խեղճ նվոցով...

Բայց մի՞թե բոլորդ էլ ներքուստ
Ձեր հունտով, միջուկով նեխած
<Պտուղներ եք միայն խակ...>
Պտուղնե՞ր և <այդ>, և թե այս
330 Հողմերի շառաչն ահարկու
Ձգնցեր — դուք <անընթ.> դեպ երկիր
Դեռ կարող էիք <անընթ.>
Հնամյա մեր <քայք.>...

Ախ,— այս է ահա զաղրելի,
335 Եվ մահուց առավել մահ,
Որ թափված եք շուրջս հիմա
Նվոցով անասելի...
Որ անգամ <փորձում> եք ճչալ
Եվ հազիվ հողմից <օրոր...>—
340 Դուք եք վարանում—
<քայք., անընթ.>
Եվ մեռնում դեռ շունչ չքաշած։

Որ դարձել է մթին զառանցանք
Ձեր նախկին ինքնությունն անգամ,
345 Ձե՛ր, հենց ձե՛ր խոհերում անգամ
Եվ թվում է այնտեղ անհանցանք,
Որ հա՜շտ եք հանձնվում այնքան
Եվ անգամ <ահը> ձեր աչքին
Նման է թվում հրաշքի,
350 Որ ինքնությունը դեռ կա։

Բայց չէ՞ որ դուք երեկ դեռ կայիք,
Եվ անգամ գործերում ձեր հաճախ
Հնդում է նաիրյան ջանք
Եվ շնչում ձեր երգայինն։—
355 Շարքերում ձեր՝ հիմա հնձած,—
Դեռ կային նաիրյան մի քանի
Բարձրաբերձ ոգով երգային
Դեռ քանի՜ բարդիներ բարձր։

... Ոմանք կան գեռ, ոմանք հեռացան,
360 Լքեցին ոմանք երգը հերկի,
Ծախեցին ոմանք իրենց ձիրքը
Եվ խեղկատակներ դարձան...
Խոպոտեց ոմանց ձայնը վսեմ,—
Տվեցին ոմանք ձիրքը վերին—
365 Ընթացիկ հով <...> հողմերի,—
Եվ հացը նրանց — դարձավ սև...

<քայք.> այդպես դարձավ ամայի,
<քայք.> դարձավ անտառն հնամյա,
<քայք.> վերջապես մնաց,—
370 <քայք.> սաղմն ահա այս ամեհի,—
<քայք.> անաղարտ <քայք.>
<քայք.> հերկը <անընթ.>

Ուր քամին է շաչում բարձրաձայն
Եվ երգում գովք երկնային...

375 Եվ ես է՛լ հին անտառի
Սրբազան պսակից բարձրացած,
Գագաթով աստղերին հասած
Մի վերջին սոսի կենդանի,—
Ահա ես — միայնակ, բարձր՝
380 Ամայի անտառում ցցված՝
Կացնի հարվածով խոցված—
Սպասում եմ արդեն իմ հերթին...

Ախ, քանի՞ անգամ բարձրացավ
Սև կացինը, որ ինձ զգետնե,
385 Եվ որքա՞ն ձգտեցին գտնել
Իմ երգի արմատները կարծր,—
Դիմացած քանի՞ հարվածի,
Եվ կրծքից, և բնից խոցված—
Հայրենի ավյունով լցված—
390 Չըկտրեց և ոչ մի կացին...

Օ, վաղո՞ւց, վաղո՞ւց, երբ դեռ
Խազազ էր ձեզ մոտ՝ ներքևում,—
Իմ գլխին այս Հողմն էր թևում,
Ձեր խղճուկ հովերի հետ մեկտեղ...
395 Նա վաղո՞ւց է ձգտել ինձ խեղդել,—
Բայց կամ չի հասել գագաթիս,
Կամ՝ սարսած ուժից արմատիս՝
Կաղկանձել է շուրջս լկտի:...

Եվ կանգնած եմ ես դեռ վեհ՝
400 Միայնակ ցցված հայրենի
Անտառում՝ լերկ, ամայի,—
Եվ Հողմն է շաչում ահեղ,
Հնչում է հեծծանքը խեղճ, այնտեղ,
Եվ անկման մահերգը սև,—
405 Եվ երկու գետնաքարշ, նսեմ
Ցողուններ են շրշում անդեմ...

Եվ ահա, մահաբեր Հողմի
Հոնդո՞ւն տենդին ընդառաջ—
Իբրև երգ հաղթության ու շառաչ,—
410 Բարձրանում է նրան<ց> «որմին»....
Իբրև նո՞ր, կենսաբաշխ, հաղթող,
Արշավող հայրենի երգի հիմն—
Նրանց ե՛րգն է շաչում հիմի
Դիերի վրա ձեր դեռ թարթող...

415 Օ, դուք, օ, դուք, օ, դուք,—
Մեծ հերկի զազրելի զարմեր,
Որ իբրև կենսունակ սերմեր,—
<Աճեցիք> խինդով հոնդուն...
Որպես Քա՛մն այն հին, պղծասեր՝
420 Մերկանդամ ձեր հոր մարմնին—
Իբրև մի պատմուճան կարմիր—
Փռեցի՞ք ձեր լորձունքը սև...

Օ, հազա՜ր ոսոխից զազիր
Որոմներ հայրենի սերմի,—
425 Ձեր ինչի՞ն է փառքը երգի,
Երբ խոպոտ խոսում եք հազիվ...
Օ, ոչինչ, որ երկինքը ձեզ
Չի տվել նշույլ տաղանդի,—

Օ, այդ որ, այդ որ սատանան
430 Բնությամբ իր որքա՜ն իրոնիկ,—
Ձեզ դրդեց՝ հավատքով խորին՝
«Հոդևոր» կոչում ստանալ...
Օ, չկա՜ր արդյոք ուրիշ,
Ոչ մի այլ ասպարեզ, ուր դուք
435 Հորդեք ձեր եռանդն անդուլ,—
Գոնե քիչ հրապուրիչ...

Ինչի՞ն է որդին աղբային
Լուսատեսք աչք, կամ ականջ,—
Լսելու ձայներ, որ չկան
440 . . . . . .
Որպեսզի գոյությունն իր պահի՝
Բավական է որդին այդ եղկ՝
Երկու անցք՝ մի փոքր մեկը նեղ,
Իսկ մյուսը — քիչ լայն,—

Այդպես էլ դուք <քայք.>
Գոյության համար ձեր գարշ—
Ե՛վ թեթև ավելի, և՛ պարզ—
Եվ բազմիցս շահավետ ուրիշ,—
445 Օ, չկա՜ր ասպարեզ արդյոք այլ,
Բայց՝ գնչին ավելի՛ ձեր վայել,—
Որ թե ձեր գոյությունը պահել,
Թե գտնել արևին <անընթ.>...

Միևնույն է այդ, թե մի կին
450 Աղտեղի, ներկած բերանով՝
Հիացած մի օր իրանով՝
Համբույրներ փոքր ամենքին...
Կամ, բախտի կամքով սրամիտ,—
Թագուհի դառնար,— և օրենք
455 Հռչակեր, որ բոլորն համբուրեն՝
Հիացած բույրով բերանի...

<...> Այն սաղմի նման կենսակիր,
Որ անգամ կապտածի <ր> բոցում
460 Մնում է <կյանքինն> ու լեցուն—
Եվ կարող է բազմանալ կրկին,—
Ես—երգիչ նաիրյան վերջին
Կենդանի, անկեզ հյուլե,—
Ձեզ, որ ինձ այսպես եք ձուլել—
465 Ջոնում եմ ահա ջերմը գրչիս։

Եվ ցավով, ավա՜ղ տխրությամբ
Թախիծով եմ նշում ակամա—
Մեռնելով հայրենի հողում,

Հայրենի ավյունն <անընթ.> ...ողում
470 Չի հասնի նոր կյանքի սակայն,—
Միայն այն հունտը՝ թեկուզ
Բյուրապատիկ անգամ չարչարած
Եթե ինքն է իր մեջ արդեն փուչ...

475 Եվ որքան են կրկնել անցյալում
Այս մահվան համերգը նոքա,
Որ այդպես — առանց փորձելու
Երգում են կրկին — անսխալ...
Ախ, եթե դու է՛լ, օ, սի՛րտ իմ,
480 Օրերիդ կարոտի դիմաց
Այնքան վարժ երգեիր քո վիշտը,
Ինչպես տերևներն այս մերձիմահ...

ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ, ԲՆԱԳՐԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՍԵՎԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

49—131-րդ տողերի տարբերակներ, բնագրային տարբերություններ և սևագրություններ.

Եվ քշում է, քշում է մեր մոլի
Հայրենի դաշտերի քամին՝
Մաքրելու համար միառմի,
Ինչպես տենդն՝ արյունից ջերմողի,—
Նաիրյան հունտերն այն բոլոր՝
Կորովի, հանճարի, երգի—
Որ կարող են հին մի երկիր
Արգելել— հերկի համար նոր...

Ահռելի, եռանդուն, դաժան,
Ամեհի կամքով զրահավոր,
Համակված ահռելի ահով
Հայրենի սիրո սրբազան,—
Համակված է ինչպես մի գազան
Արնավառ զգեստի <անընթ.> ...ով,—
Համակված զարհուրիչ տապով
Իր երկրի անցյալից սրբազան,

Համակված անսանձ սարսափով,
Ինչպես արնագույն լաթից
Ցուլե՛րն են տրվում սարսափի,—
Իր ամբողջ խեղճության թափով—
Այրում է երկաթով ու հրով
Փոքրագույն ծիլ կամ շյուղ ամենայն,
Որ ունի երանգ նաիրյան,
Եվ կարող է վարակել մեզ սիրով...

Որպես սև, զազրելի զառանցանք,
Որ պատում է ոգին մարդկային,—
Որպես ահեղ դահիճ,
Որ, իբրև մահացու հանցանք—
Ճանաչում է ոճի՛րն այն միայն,
Որի հեղինակն հանցապարտ
Հանձնված է իր <կարմիր> կացնին,—
Չգիտեր այդպես Հողմը մեր այն—

Մեր երկրի մաքրագործ այն Քամին
Որ երկրի Հողմն է տիրող—
Իր երկրի ջուրն ու հողը սիրող
Եվ անգամ պանծացո՜ղ այդ սիրով
Այդ — անասնական — սիրով
Վարակված մարդկանցից առավել
Ձազրելի ու սև թշնամի...

Մեր երկրի հանդուն այն Քամին,
Հայրենի մեր Հողմը տիրող
Հայրենի ջուրն ու հողը սիրող
Էակից վատթա՜ր թշնամի...
Աշխարհի փրկարար այդ Քամին
Կարո՞ղ էր արդյոք սիրով
Ընդունել — հին տունն իր սիրող
Ձազրելի հաշմանդամին...

Օ, այդ չէ սակայն զազրելի,
Որ քշում է ահռելի մի հողմ
Թշնամու նման ամեն կողմ
Մեր երգի նոր ծիլերն էլի՛։—
Այն երբ է եղել հարազատ
Իր երկրի, կամ օտար կողմերի
Մահաշունչ, դժնի հողմերից
Նաիրյան երգի հերկը — ազատ...

Քշել է մի՛շտ էլ Նաիրյան
Երգերի սաղմը — քամին,
Տեսել է բյո՜ւր թշնամի,
Բայց բացվել է էլի — բո՛րբ ու բուրյան։
Քշվել է, արվել ոտնակոխ,
Խառնրվել հրի ու փոշու,—
Բայց իբրև ոգի, իբրև շունչ
Պահել է իր սաղմն ինքնագո։

Ամեհի կամքով զրահավոր,
Ահռելի, եռանդուն, դաժան
Բռընկված սակայն սրբազան
Հնամյա օրերի ահով...

91—107-րդ տողերի այլ տարբերակներ.

Համակված ահռելի ոխով
Դեպի սև, անասնական
Այդ սիրով ոգին սակայն,
Ծպտրված «կուսությյան» քողով
Էակները բոլոր նոզկալի
Նա հնձում է ձեռքով <անողոք>
Հայրենիքն իր — հայրենի հնձի,
Որ ցանի — ցնծալի մի գալիք։

Իր երկրի հանցավոր սիրով
Վարակված հունտերն այդ սակայն
Հնձում է նա հանուն իրական
Հայրենիքի սիրո...
Նշելով գարշանքի կնիք
«Հնացյալ սիրո» ճակատին

<անընթ.> ես դրան հակադիր
<անընթ.> ճակատին Հայրենիքի։

Ամեհի կամքով զրահավոր՝
Ամեհի, եռանդուն, դաժան,
Սակայն սիրտը լցրած սրբազան
Ամեհի կամքով զրահավոր
Ահռելի, եռանդուն, դաժան
Համակված որպես բիրտ մի գազան
Արնագույն թշնամու ահով։

Հնամյա երկիրն իր սիրող
Էակից ահռելի թշնամի...

Եվ անասնական սիրով մարդկանցից առավել...

Բայց պահել է կենդանի մի շունչ
Ինչպես սաղմը մնացյալ
Բայց իբրև ոգի, իբրև շունչ
Պահել է իր սաղմը ինքնագոհ։—

Օ, այն չէ՛ սակայն զազրելի,
Որ քշում է ահռելի մի հողմ,
Ամեհի խանդով ամեն կողմ
Մեր երգի տերևներն էլի՛,—
Եվ երբ է եղել հարազատ
Մեր երգին հայրենի Հողմերի,
Կամ օտար, դժնի կողմերից
Շառաչող...

Օ, այն չէ՛ սակայն զազրելի,
Որ քշում է ահռելի մի հողմ,
Թշնամու նման, ամեն կո՛ղմ—
Մեր երգի տերևներն էլի։—
Օ, ե՞րբ է եղել <հարազատ>
<Նաիրյան երգի սաղմերին>
Հայրենի կամ օտար Հողմերի
Վայրենի նախճիրից ազատ...

Օ, երբ է եղել հարազատ
Հայրենի կամ,
Կամ օտար թշնամի կողմերի
Մահաշունչ ընտանի հողմերից

Օ, ե՞րբ է եղել հարազատ
Իր երկրի կամ այլ կողմերի
Մահաբեր դժնի հողմերից
Նաիրյան երգի բերքը — ազատ....

Օ, այն չէ զազրելին սակայն,
Որ քշում է հայրենի մի հողմ,
Շյուղերի նման ամեն կողմ—
Երգեր ու ծիլեր կուսական,—
Եվ ե՞րբ է եղել խժակամ՝
Հայրենի, կամ օտար կողմերի
Տարաժամ, դաժան հողմերից
Մեր երգի սաղմը — ազատ...

Քշել է միշտ էլ Նաիրյան
Երգի սաղմը, հաճախ դարձած սա՜ր—
Օ, միշտ էլ — հողմերից հազար,
Աշխարհի բոլո՜ր կողմերում...
Քշվել է, արվել ոտնակոխ,
Խառնրվել հազա՜ր ահաշունչ
Ճամփեքի ջրի ու փոշու,—
Բայց հառնել է էլի՜—

Եվ հազար հողմեր <.....>
Ոտքերով հազա՜ր գետնահար,—
Պահել են միջուկը նրա հար
Ե՛վ անեղծ, և՛ անխառն, և՛ վառ...
Ընկել է — իբրև սա՜ղմ կենդանի,
Ոգու հո՛ւնտ իբրև անմահ,
Որ ինքնով է միայն անմահ,
Որ ինքնո՛վ, ինքն իր մեջ է անմահ,
Որ ուզում է Հողմը տանի...

Օ, այն չէ՜ սակայն զազրելի,
Որ քշում է ահռելի մի հողմ
Շյուղերի նման, ամեն կողմ— .
Մեր երգի նոր ծիլերն էլի՜։—
Այն ե՜րբ է եղել հարազատ
Իր երկրի կամ օտար կողմերի
Մահաշունչ, դժնի հողմերից
Նաիրյան երգի շյուղն — ազատ...

Քշվել է մի՛շտ էլ Նաիրյան
Երգի սաղմը, նորածիլ կամ բացված...

176—207-րդ տողերի տարբերակներ.

Իսկ գովք եմ երգում Նաիրյան
Պանծալի ոգուն հայրենի,
Որ պահել է հունտն հայրենի
Կենդանի, ինչպես սաղմն արյան։
Եվ գովք եմ երգում ցնծալի
Հանուն հոր, և՛ որդու, և՛ հոգու՝
Նաիրյան բարձրաբերձ ոգուն
Եվ սաղմին նրա պանծալի...

Եվ նա գովք է երգել անմահ,
Գովք՝ անմահ հողմին ու քամուն՝
Շռինդով է ողջունել թշնամուն,
Որ բերել է ուզում իրեն մահ...
Հիմնով է դիմել ընդառաջ
Նաիրյան ոգին կենդանի—
Ամենայն փորձության ու մահի,—
Եվ հառնել է միշտ անմահ...

Ես գովք եմ երգում <ցնծության>
Հողմերին, քամուն ու հրին,
Որ անվերջ ոտնակոխ արին
Նաիրյան սաղմն անկիզուն։
Եվ գովք եմ երգում վերջապես
Մահաբեր, վայրագ, ամեհի,
Մահաշունչ, ներքուստ ամայի
Այն վայրի ուժերին գրչակեր.—

Որ դարե՜ր, դարե՜ր, դեռ դարե՜ր
Վայրենի՜, վայրա՜գ, բարբարո՜ս
Խուժադուժ, խառնակ <անընթ.>
<Հեղեղեր> ինչպես — արդարև
Պատմության, կյանքի <բնության>
Ուժերի նման կործանող
Փորձեցին մեր ոգին ծանր—
Կուփեցին մեր ոգին անմահ...

231—456-րդ տողերի տարբերակներ, բնագրային տարբերություններ, սևագրություններ.

Շյուղերին, որ ընկնում են հիմա
Եվ տրտում ու...
Եվ թույնով, թախիծով, խեղճությամբ
Ու <.....> եմ նայում,
Որ ընկնում եք <ահից> նվալով
Եվ մեռնում եք — դեռ շունչ չփչած.—

Եվ ա՛յդ է ահա, ահա այդ
Խեղճությունն է ահա ձեր ներքին,
Որ թախիծ է տալիս իմ երգին
Եվ լցնում ոգիս տխրությամբ...

Եվ զարմանք է պատում, և անհուն
Կասկածանք, <շվարանք> անգամ,
Թե ինչը ձեզ թեքեց այդքան,
Որ դարձաք անդեմ այդքան դուք...

Ինչպիսի՜ այդ հողմ էր հրկեզ,
Որպիսի՜ <անհիմն ուժ>,
Որ — լուծեց այդպես ձեզ ներքուստ
Եվ զրկեց ձեր ոգին...

Հնամյա անտառում բուսած,
Օ, հայրենի անտառում
Հազար, և հազար, և հազար
Տարիներ արմատներ ձգած
Որքան ճյուղ արձակած
Մի կաղնու սաղմն — ասա,—
Անտառի ծիլերն,— ասա,—
Ասա ինձ աշուն հայրենի
Կարո՞ղ են ծիլերն այդ մի՞թե
Ջունենալ կուտակած իրենց մեջ
Ջլինել և ոչ մի <անընթ.>։

Կարո՞ղ է հողմերի շնչից,—
Ուշացած արտն անգամ հանկարծ
Տարածվել այնպես գետնաքարշ,
Որ ոչ մի ցողուն չփորձի
Գոնե մեջքը շտկել մի անգամ...

Կարո՞ղ է սերունդը վերջին,
Որքան էլ ահեղ հողմերում
Ջունենալ ոչ մի...
Կա՞ սերունդ արդյոք, որ
Նախընթաց սերնդից հանկարծ

Ունենա ոչինչ ժառանգած
Իբրև ջիղ, արյուն ու ավյուն։—
Որ փչող հողմերից...

Օ, այդ ի՞նչ, այդ ի՞նչ, այդ ի՞նչ
Ահռելի բացիլ էր զազրելի,
Որ որդի պես, ցեցի պես փորեց
<Նաիրյան քար ոգու>
Որպես թույլ, բարակ <անընթ.>
Նաիրյան հազարամյա
Ինքնության զարմով զրահավոր
Ձեր ոգու կեղևն <ահա>,
Իբրև մաշկ երբեմնի զառամյալ...

Օ, այդ ի՞նչ, այդ ի՞նչ զորավոր
Մի բացիլ էր՝ ոգու ցեց բոցե,
Որ այդքան հեշտությամբ սղոցեց
Նաիրյան ինքնությամբ զրահավոր...
Ոգու ոգորումն հազարամյա
Սղոցեց հեշտությամբ, հեշտ
Եվ որդի նման մտավ ներս,
Ինչպես մաշկ մարմնի զառամյալ...

Որ ինչպես հին մրգի մեջ
Սողոսկած որդն ամենից
Նախընտրում է հունտը

Ինչպես հին նեխած մրգի մեջ
Սողոսկած որդն հանճարեղ
Ամենից առաջ — անեղծ
Հունտերն է կրծում

Այդպես մենք երբեմն կարմիր
Դեռ անեղծ թվացող խնձորում
Կտրելուց հետո — խորունկ
Սողոսկած որդի հետք հանկարծ

Օ, ցեցի նման ահարկու,
Բացիլի նման մի անտես
Դա Հողմի սաղմն էր անկեզ,
Որ կրծեց զրահը ձեր ոգու...
Եվ—ցեցի նման մտսոծ ներս—
Ինչպես հին մի մրգի միջուկ,
Որ վաղուց դարձել է ջուր...

Նա ցեցի նման մտավ ներս՝
Փնտրելով դեռ անեղծ մի միջուկ,—
Բայց... դարձել էր արդեն պղտոր ջուր
Ձեր ոգու միջուկն արդեն եղծ...

Եվ տեսավ, որ վաղո՜ւց արդեն ծեր՝
Ձեր անկոր կարծրացած ոգու լոկ
Արդեն ջուր դարձած միջուկով—
Կեղևն է նաիրյան մնացել...
Եվ... մգլած մրգերի նման,
Որոնց մեջ սաղմն անգամ հին

Վաղուց է արդեն փչացել,—
Ընկնում եք դուք խեղճ, նվալով...

Որպես ճառագայթ անտես,
Նրա պես — ամենո՛ւր թափանցող—
Այսօրվա Հողմերի քանդող
Ճառագայթը ձեր ոգին քանդեց։
Նա ցեցի նման մտավ ներս,
Որ ուտի հին մի միջուկ,—
Բայց... գտավ այնտեղ միայն ջուր,
Որ վաղուց նեխած էր արդեն...

Եվ ե՛ս էլ՝ միևնույն անտառի
Սրբազան խորքից բարձրացած,
Գագաթով աստղերին հասած
Մի վերջին սոսի կենդանի,—
Արդ ես էլ, միայնակ բարդի՝
Ամայի անտառում ցցված՝
Արդեն քար կացնով խոցված՝
Մնում եմ <արդեն> իմ հերթին...

Ախ, քանի՞ անգամ բարձրացա<վ>
Այդ կացինը, որ ինձ զգետնե,—
Եվ որքա՞ն փորձեցին գտնել
Արմատները երգիս կարծրացած,—
Դիմացած քանի՞ հարվածի՝
Եվ սրտից, և բնից խոցված՝
Հայրերիս ավյունով լցված՝
Ջրկտրեց և ոչ մի կացին...

Եվ ընկնում, ընկնում են կրկին,
Ինչպես տերևներ աշնան
Հայրենի հերկերում <իրենց>
Ցողուններ հայրենի երգի...
Եվ ընկնում են, ընկնում են կրկին
Եվ գեռ նուրբ շլուղեր նորընծա,
Եվ տոկուն արմատից հնձած
Ցողուններ՝ բարձրաբուն ու հին...

Եվ այդ ո՞ր, այդ ո՞ր սատանան
Բնությամբ այդքան իրոնիկ,—
Ձեզ հրեց դառն այս օրին
Հոգևոր կոչում ստանալ...
<Որ մի կին> նեխած բերանով՝
Անատամ, թարախակալ,
Կենդանի կին իբրև կույս դուրեկան
Համբույրներ սփռե վճարով....

Միևնույնն է, թե նեխած բերանով,
Թարախոտ մի կին հանկարծ
Ապրելու համար ցանկա
Համբույրներ վաճառել թատրոնում...

Ինչի՞ն է որդին աղբային
Լուսատեսք աչք, կամ ականջ,

Լսելու ձայներ, որ չկան
Աղբակույտի...
Որպեսզի գոյությունն իր պահի
Բավական է որդին այդ եղկ
Երկու անցք միայն՝ մեկը քիչ նեղ,
Իսկ մյուսը — ավելի...

Այդպես էլ դուք։ Այո՛։ — Եվ ի՞նչ.
Գոյության համար ձեր գորշ
Գուցե ավելի և՛ պարզ,
Ե՛վ բազմիցս շահավետ գուցե—
Արդյոք այլ ասպարեզ չկա՞ր,—
Գործ՝ դնչի՛ն ավելի ձեր վայել,—
Որ թե հեշտ, թե կուշտ ձեզ պահեր՝
Եվ այլոց գոնե միտքը չրգար։

Դեռ առաջ, վաղուց,— երբ դեռ
Խաղաղ էր <վարը> ներքևում,—
Իմ գլխին այս հողմն էր հևում
Ձեր խղճուկ կանչերի հետ մեկտեղ...
Նա վաղո՛ւց է ձգտում ինձ խեղդել,
Բայց կամ չի հասել գագաթիս,
Կամ փորել է <անընթ.> արմատիս՝
Կաղկանձել մերթ «կիրթ», մերթ լկտի...

Եվ գաճաճ...
Խոպոտեց ջինջ ձայնը նոցա
Եվ տաղանդը անգին — գահից,—
Հողմերի պես բերրի, որ չաճեց
Եվ ոչ մի վսեմ երգի հանճար։
Մարեցին իրենց ձիրքը վերին
<անընթ.> հովերին
Կանչելով գռեհիկ հանգեր
<անընթ.> անգետ

Ոմանք կան դեռ, կամ անցել են արդեն
Լքեցին ոմանք հերկը երգի,
Ծախեցին ոմանք <ձիրքը վերին>
Եվ խաչակիր դարձան...

Եղծեցին իրենց ձիրքը վերին...

Իսկ դո՞ւք — իսկ դուք,
Մեր հերկի ղազրելի զարմեր,
Որ միայն <անընթ.> սերմեր
Սփռեցիք ձեռքով ձեր ստրուկ—
Քամի՛ պես ծախու, պիղծ ասես՝
Մերկանդամ ձեր հոր մարմնին
Իբրև մի պատմուճան կարմիր
Փռեցիք լորձունքը ձեր սև։—

Օ, հազար վախից զազիր
Պղծողներ հայրենի հերկերի,
Ձեր ինչի՞ն էր փառքը երգի,
Երբ խոսել եք անգամ հազիվ։
Այդ ոչինչ, որ երկինքը ձեզ
Չի տվել նշույլ տաղանդի,

Մարդկային խիղճն եք
Վարակում <անընթ.> դեռ...

Ավելին, միևնույնն է դա,
Որ նեխած, պիղծ, գարշահոտ
Բերանով այդ կինն աշխարհում
Դառնալով թագուհի հանկարծ,—
Ցանկանար որպեսզի բոլոր
Հպատակ այրերն իր երկրի
Պարտադիր կերպով համբուրեն
Ամենայն հերթով
Շրթունքներն իր
Եվ ահա,
Որ բոլորս, իբրև օրենք,
Պարտավոր ենք նրան համբուրել՝
Զմայլված բույրով բերանի...

Ոչ. համբույրն այդ կնոջ առավել
Կլիներ նման ձեր դերին,
Եթե կամքով մի վերին
Թագուհին դառնար նա մեր—
Եվ, բխյալ ահա նրանից՝
Պարտ են հռչակել օրենք,
Որ բոլորը նրան համբուրեն
Զմայլված բույրից բերանի...

Սակայն մեր այս <գարշ> բերանով
Թագուհին հեքիաթ է եթե,—
Կենդանի՞ եք այսօր դուք դեռ
Եվ երգում եք երգեր նորանոր
Եվ մինչդեռ այն գորշ
Թագուհու համբույրով գարշ
Ձեր երգած երգերն ստորաքարշ
Զմայլվում են...

Եվ նրա քոռ — սրամիտ
Նախարարն հռչակեց օրենք,
Որ բոլո՞րս նրան համբուրենք՝
Զմայլված բույրով բերանի...
Նրանից չի՞ արդյոք <նկարած՝>
Նրանից ... հինգ դար առաջ
Չէ՞ որ <անընթ.> — մոգե՞ր՝
Նա տեսել անցյալն ու գալիքը—
Մինչ կատարումն աշխարհի
Օ, մի չնչին խաղալիք
Այդ հանճարի համար էր

Բայց չէ՞ որ դուք երեկ դեռ կայիք,—
Եվ անգամ գործերում ձեր հաճախ
Հնչում էր նաիրյան ջանք,—
Եվ <աներեր> ձեր շնչում երգային
Եվ կային դեռ երեկ ձեր մեջ
Արդեն այր դարձած բարձրաբերձ—
Ե՞վ ոգով, և՛ շնչով անեղծ
Նաիրյան բարդիներ անկոր...

476-րդ տողի սևագրություն.

Մահացու այս եբգը նոքա...